


■ Կարէն Բարուբեանի մամլոյ ասուլիսը



Վերջին ժամանակներուն ԼՂԺ ժամանած էր արտասահմանեան տարրեր պատուիրակութիւններ որոնց այցելութեան նպատակները տարրեր եղած են և բնականաբար տարրեր ալ արդիւնքներ ստացած են: Այս հարցերու պարզութեանն նա իրաւում էր ԼՂԺ ԳԽ նախագահի պաշտօնակատար Կարէն Բարուբեանի մամլոյ ասուլիսը:

Կողորմելու էր որում նախնական հազորդաբուժեան մէջ պրն. Բարուբեանը նշեց, որ ԼՂԺ մայրաքաղաք ժամանած են 22 վախ նախագահ Գագիկ Յարութիւնեանը, ԱԳՀի միջնարածքային հարցերու յանձնախումբը, ՄԵԾն Բրիտանիոյ և Ֆրանսայի խորհրդարանական պատուիրակութիւնները, ինչպէս նաև Սփիւռքի բարձրաստիճան հոգևորականներ: Տարրեր եղած են պատուիրակութիւններու այցելութիւններու նպատակները և հանդիպումներու ընթացքը: Բրիտանական պատուիրակութեան մաս կը կազմէին ստորին սրբապետի պատգամատուներ և բոլորին ծանօթ Բարուբեանը որ հետաքրքրուեցաւ թէ ինչպէս կ'ընթանայ կեանքը ԼՂԺ մէջ, ինչպէս կը վերականգնուի տնտեսութիւնը, ինչպէս են Ղարաբաղ - ստրախճանական ուղիղ երկխօսութեան հարցերը: Հանդիպումները՝ այս և միւս պատուիրակութիւններու հետ անցած են բարեկամական մթնոլորտի մէջ: Այսպէս, բրիտանական պատգամատուներէն մէկը նոյնիսկ կատակած է, որ ԼԹՄ անգամ Գասպարովը յաղթէ Շորթին, ան չի խանդարեր Ղարաբաղի և ՄԵԾն Բրիտանիոյ կառավարական յարաբերութիւնները:

Անդրադառնալով միւս պատուիրակութիւններու այցելութիւններուն, պրն. Բարուբեանը կարեւորեց Ֆրանսական պատուիրակութեան այցելութիւնը, որ ամենարագմամբ իր էր: Այն կը պլանաւորէր և բոլորհարգարանի վարդապետան հարցերու յանձնաժողովի նախագահ Հանրի Սապիի



կողմէ: Պատուիրակութիւնը բերած էր նաև օգնութիւն՝ հիմնականին մէջ զեղամիջոցներ զինուորական հիւանդանոցին համար: Պատուիրակութեան կազմին մէջ կը գտնուէին տարրեր բնագաւառներու ներկայացուցիչներ, որոնք հանդիպման ժամանակ ալ յատուկ կը քննարկէին բազմազան հարցեր: Պատուիրակութեան այցը կազմակերպած էր Ֆրանսայի և Բրիտանիոյ խորհրդարանի մօտ ԼՂԺ ներկայացուցիչ Վարուժան Գրիգորեանը: Ներածական խօսքին մէջ պրն. Բարուբեանը շնորհակալութեամբ յիշատակեց Հայաստանի լուսաւորութեան նախարարութեան աշխատակից Յովակ Աւագեանին անունը, նկատի ունենալով որ ան այդ օրերուն դարձեալ այցելած էր Ստեփանու երա՛ ուղեկցելով Սթոքհոլմէն առաքուած 10.000 թոն բեռներ:

«Պատուիրակութիւններու ներկայացուցիչները, աւելցուց պրն. Բարուբեանը մեր զիրքորոշումներէն ելլելով մէկ անգամ ևս համոզուեցան, որ արցախեան պահանջատիրութիւնը ինքնորոշման ճանապարհով ազատ ու խաղաղ ապրելու ձգտում է»:

Վերջապահութեան պրն. Բարուբեանը պատասխանեց լրագրողներու հարցումներուն որոնք կը վերաբերէին ԼՂԺ

Հայ - Ատրախճանական Շփումներ

Մարտի 27-ին Տաու չի գու եզի երամանակուսը վազգէն Ղարաբաղը և շրջանի իշխանութիւններու ներկայացուցիչները ծանոթացան Տաու չի և մերձակայ շրջաններու յանձնարարական շրջաններու ներկայացուցիչներուն հետ: Կողմերը բանակցութիւններու բնագիծին հետեւեցին մինչև փակի օր առաջ տեղի ունեցած սանձամային խախտումներու դէպքերը, իրենց զիրարոչումները արտայայտեցին կրակով զարթեցնելու համար: Հայկական կողմը համաձայնեցաւ համատեղ պահակաձեւեր հիմնելու ստրախճանեան առաջադիւն, առօր գոյութեան փորձը ակիրազորութիւն համարելով: Կողմերը պայմանաւորուեցան շարունակել յետագայ հանդիպումներ:

«Անդրանիկ Յարութիւնեան» Հիմնադրամ Տաու չին

«Անդրանիկ Յարութիւնեան» հիմնադրամի անդամները Գարգ Յովսէփեան և Վարդգէս Պետրոսեանը «Ապեղանի» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչ տեղեկութեամբ այցելեցին Տաու չի, շրջանի գտնուած ազատամարտիկներու ընտանիքներուն հիմնադրամի հանգանակութիւնը անձամբ յանձնելու նպատակով: Անոնք 48 ազատամարտիկներու ընտանիքներուն յատկացուցին 15 հազարական ռուբլի, իսկ երեխաներէն իւրաքանչիւրին նայնպէս 15 հազարական ռուբլի: «Մեր հիմնադրամի նպատակն է ոչ միայն ներկայի օժանդակութիւն ցայց տալ գտնուածներու ընտանիքներուն, այլև բարոյական նեցուկ դառնալ, այդ ձեռով մասնակցիլ ազատամարտին», թաւ յանձնախումբի անդամ Վ. Պետրոսեանը:

«Լոյս Որ Երբեք Պիտի Զմարի»

Հայաստանի մշակոյթի վարչութեան գրադարաններու կեդրոնացուած համակարգի բաժինը հոկտեմբեր 1 - 8 մայրաքաղաքի մէջ կ'իրագործէ Աւետիս Իսահակեանի ծննդեան տարեդարձին նուիրուած գրական օրեր՝ «Լոյս, որ երբեք պիտի չմարի» նշանաբանով: Միջոցառումներու ծրագրեր կը ներկայացուցին Իսահակեանի անուան տուն - քանդաքանին մէջ, իր պանթեոնին շուրջ, կամերային երաժշտութեան տան դահլիճին մէջ: ԿՐ ներկայացուցի գրական - երաժշտական համերգներ, գրական ընթերցումներ, Իսահակեանական քեմաներով գրքային ցուցահանդէսներ, յուշ - երեկոյ, գրադարանի տարեդարձին նուիրուած երիտասարդ ստեղծագործողներու և լաւագոյն կատարողներու մրցոյթ:

Մ. Արեւելի Թանգարանի Բացումը

Զարեցի անուան գրականութեան և արուեստի քանդաքանին մէջ բացուեցաւ «Միջին Արեւելի քանդաքանը»: Այն ամերիկահայ անուանի նկարիչ Մարկոս Գրիգորեանի և իր վաղեմեանի դասեր դերասանուհի Մարիա Գրիգորեանի հաւաքածոյի նուիրատուութիւնն է, կատարուած Հայաստանի Հանրապետութեան: Հաւաքածոյին մէջ Մարկոս Գրիգորեանի շուրջ 50 տարուայ աշխատանքն է, որ կը ներկայացուի Արեւելի մշակոյթի, կիրառական արուեստի և կենցաղի վերաբերող հազարաւոր արժէքաւոր ստեղծագործութիւններ և հազուագիւտ առարկաներ:

Հաւաքածոյէն բացի ներկայացուած է նաև նկարի գեղանկարչական և գորգագործական աշխատանքներ, որոնք ևս նուիրատուութիւն են Հին:

Թանգարանի բացման առիթով ելոյթ ունենալով Հայաստանի մշակոյթի նախարար Յակոբ Մովսէսը, նշեց, թէ «ուրախ են ուղջունելու այս խորհրդանշական առիթով մեր մշակութային կեանքին համար մեծ նշանակութիւն ունեցող այս գործը»:

Արուեստագէտ Մարկոս Մարկոսեան այսօր կը ներկայանայ իսկական հայի առաքելութեամբ: Իր ողջ կեանքի ընթացքին ան ձեռք բերած է իւրօրինակ հաւաքածոյ և այսօր ան կը նուիրէ գայն հայրենիքին: Սոյն հաւաքածոն մասնազտներու կարծիքով եզակի, բացառիկ և ինքնատիպ նշանակութիւն ունի: Այն արժեքաւոր է երկու առումով՝ նախ հանրապետութեան մշակութային կարողականութիւնները աւելցնելու իմաստով, երկրորդ այն հսկայական աղբիւր է, ուսումնասիրութիւններու համար:

Թանգարանի բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան փոխ նախագահ Գագիկ Յարութիւնեանը, լուսաւորութեան նախարար Հայկ Ղազարեանը, պետական նախարար Արմենակ Ղազարեանը և Հայաստանի մօտ Մ. Նահանգներու իրանի դեսպանատան աշխատակիցներ և պուրետագէտներ:

Յիշատակի Օրեր Նուիրուած Բանաստեղծ Մուշեղ Իշխանին

«Մուշեղ Իշխան»ի անուան դպրոցի մանկավարժական ներկայացուցիչները կրթութեան վարչութեան հետ համա-

որպէս քաղաքական միասն ճանչցուելու, սաւս - իրական և ուսու - դարբարդեան յարաբերութիւններու, ԳԽԻ ընդհատուած նախաշրջանի աշխատանքին, Հայ Դատի պահանջատիրութեան և այլ հարցերու: